ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնք
ք.Վեդի, Թումանյան 6, +(374)60881111 vedimunicipality@gmail.com

ք.Վեդի 10. 07. 2023 թ.

«Ալֆա-Էտալոն » ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ՝ Կ. ՄԱՐԿՈՍՅԱՆ
/ք. Երևան, Տիգրան Մեծ 29ա 37բն./

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանի և «Ալֆա-Էտալոն» ՍՊ ընկերության միջև 31.05.2023թ. կնքված N ՀՀԱՄՎՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/11 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում երրորդ չափաբաժնի մասով «Ալֆա Էտալոն» ՍՊ ընկերության կողմից պետք է մատակարարվեր 9 հատ կենտրոնական պրոցեսորներ, որոնք չեն մատակարարվել ընկերության կողմից:
Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի) և պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի մասնակի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝«Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

«Ալֆա Էտալոն» ՍՊԸ ընկերությունը Վեդու համայնքապետարանի 900425102054 հաշվեհամարին փոխանցել է որակավորման և պայմանագրի կատարման ապահովումների համար վճարվող գումարները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Վեդու համայնքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է Պայմանագրից մասնակի, համարելով այն լուծված՝ չմատակարարված ապրանքների մասով 118680.00 / հարյուր տասնութ հազար վեց հարյուր ութսուն / ՀՀ դրամ գումարի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառվում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները: Հիմք ընդունելով որակավորման և պայմանագրի կատարման ապահովման համար գումարների վճարումների կատարումները՝ չկիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**